



ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
PANARMENIAN AND INTERNATIONAL ACADEMY OF SCIENCE

Շնորհավո՛ր Ձեր Նոր՝ 2019 թվականի տարին, հայրենակիցնե՛ր,

Մի րեւի՛ հայրենակիցներ, շնորհավորում եմ Ձեր Ամանորն ու Սուրբ Ծննդյան տոնը:

Այս նոր տարում ցանկանում եմ Ձեզ սեր, երջանկություն: Նոր Տարին թող բարեբեր լինի բոլորիս համար, լինի կայունության, վերելքի, մեր միասնական երազանքների իրականացման տարի:

2018 թվականը աշխարհասփյուռ հայության համար դարձավ բեկումնային տարի: Հայ ազգը ողջ աշխարհին ցույց տվեց իր մշակույթի գեղագիտական գերակայությունը: Հեղափոխություն, որտեղ չկար հակառակորդ, թվացյալ հակառակորդն անգամ իր գույքած լռությամբ օգնեց, որ հեղափոխությունը դառնա ազգային բարձր գիտակցության գեղեցիկ արարք՝ բարեկարգման եւ բարեկեցիկ ապրելու հեղափոխություն: 2019 թվականին մենք՝ հայերս, հեղափոխությունից ակնկալում ենք ազատություն, տնտեսական զարգացման ծրագիր, Հայաստան-Արցախի միացում, Միացյալ Հայաստան, արտերկրում ապրող հայի քաղաքացիական իրավունքի հաստատում՝ Հայրենի Երկրում: Հայաստանի Հանրապետության տարածքում եւ Հայաստանի Հանրապետությունից դուրս, կիսատ եւ կիսավեր մնացած մշակութային բազմաթիվ խնդիրների լուծում:

Խորը մտահոգիչ քայլեր է իրականացնում կառավարությունը՝ լուծարելով Հայաստանի Հանրապետության Մշակույթի եւ Սփյուռքի նախարարությունները: Հույս ունենք, որ 2019 թվականին կառավարությունը կվերականգնի Սփյուռքի եւ Մշակույթի նախարարության գործառնությունները, որը հնարավորություն կտա նորովի ներկայացնել Հայոց պատմամշակութային արժեքները, կպայքարի հարեւան ազգերի կողմից մշակութային արժեքների յուրացման եւ կեղծարարությունների դեմ:

Գիտությունների Համահայկական Միջազգային Ակադեմիան Հայաստանի Հանրապետության պատմամշակութային արժեքների խնդիրները կարեւորող ընկերների հետ՝ միասնաբար վեց ամիս շարունակ պաշտպանում էր Քարահունջի Ձորաց Քարեր պատմամշակութային հուշարձանը գերատեսչական տարատեսակ ոսնձգություններից, արդյունքում հաջողեցինք կասեցնել հնարավոր անհարկի պեղումները Ձորաց Քարեր աստղագիտական համալիրի ծիսական տարածքում, փորձելով պահպանել Պարիս Հերունի Մեծ գիտնականի գիտական եզրակացությունը եւ գաղափարը:

Քարահունջի Ձորաց Քարեր աստղագիտական ծիսական համալիրի առնչությամբ Գիտությունների Համահայկական Միջազգային Ակադեմիան 2019 թվականին կիրավիրի գիտաժողով՝ հանգուցալուծելու Ձորաց Քարերի հիմնախնդիրը:

Մի րեւի՛ հայրենակիցներ, Հազարամյակներ ի վեր Կրթությունը, Լեզուն, Հավատն ու Մշակույթը հանդի սանում են հայ ազգի խորին խորհուրդը՝ որպես ամենահինազույն ազգ և ամենահինազույն ավանդական մշակույթ կրող, ընտանիք, հավատ եւ եկեղեցի ունեցող ազգ, կանգնած ենք հաստատուն: Հայոց առողջու թյունը, ծնունդը, ընտանիքը, հավատն ու կրթությունը ապամարդկային տարատեսակ ներմուծումներով իրավունք չունեն սասանելու: Ցանկանում ենք 2019 թվականին պահպանել մեր ավանդները, ինչպես Շուտնուխից կանայք պահպանեցին եւ ճանապարհեցին կոզբաղիններին-«Այ, Կոզբաղին, մեծաբերան, Քո ատամներ ճակտիդ վերան շարան-շարան»:

Մի րեւի՛ հայրենակիցներ, եւս մեկ անգամ շնորհավորում եմ Նոր՝ 2019 թվականը: Թող այն դառնա Հայաստան- Արցախ աշխարհի միասնության, Ձինվորի անփորձանք ծառայության, զինվորի մոր աչքալույսի ու բերկրանքի, որդու թագ ու պսակի ուրախության տարի: Դառնա լույսի, առատության, բերրիության եւ խաղաղության տարի: Շնորհավո՛ր Նոր Տարի, իմ հայ ժողովուրդ:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Գերմանիա, Մայնց

ԵՄ պատասխանատու՝ Կ. Հայրապետյան

31.12.2018թ. 01.01.2019

